ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ավնիվ Թադևոսյան

ՀՏԴ 342.7:7
ԳՄԴ 67.400.32+85
Թ 141

Հրատարակող
Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի
հայաստանյան գրասենյակ
Խ. Աբովյանի փ. 41, գրաս. 11 0009, Երևան, ՀՀ
Կայք - https://www.freiheit.org/south-caucasus
Facebook - https://www.facebook.com/FNFARMENIA

Հեղինակ
Ազնիվ Թադևոսյան

Թարգմանիչ (անգլերենից հայերեն)
Սիրանուշ Եսայան

Խմբագիր
Սեդա Մեսրոպյան

Հայերենի էջադրում
Արուսյակ Օհանյան

Շապիկի ձևավորում
Սուրեն Սարգսյան

Տառատեսակ
HayRoboto

Հրապարակման տարեթիվ
2022 թ.

Սույն հետազոտությունը քննարկում է հայաստանյան արվեստի ոլորտում առկա խնդիրներից մեկը՝ ստեղծագործական ազատությունը: Այն փորձ է անում բացահայտել, թե ինչպես են արվեստի ներկայացուցիչներն ընկալում իրենց արտահայտման ազատությունը, ու առաջարկում այն ոլորտներն ու բացերը, որոնք հետագա հետազոտության կարիք ունեն: Հետազոտության նպատակներից է նաև նպաստել առաջարկած բացերի ավելի խորքային վերլուծությանը հետագայում:

Նշում սույն հրապարակման մասին
Սույն հրապարակումը հնարավոր է դարձել Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի աջակցությամբ: Սույն հրապարակման մեջ տեղ գտած կարծիքների և դիրքորոշումների համընկնումը Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի հետ պարտադիր չէ:

© Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի
հայաստանյան գրասենյակ, 2022

ISBN 978-9939-1-1539-9

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ 8

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 34

ՀՂՈՒՄՆԵՐ 38

ԱՂՅՈՒՍԱԿ 1. ԽՈՐՔԱՅԻՆ ՉՐՈՒՅՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ 40

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ 42

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ստեղծագործական ազատության սահմանափակման մասին խոսելիս առաջին օրինակը, որ սովորաբար մտաբերում ենք, պետական գրաքննությունն է: Այնուամենայնիվ, արվեստագետների իրավունքների խախտման բազմաթիվ և ավելի նուրբ եղանակներ կան, ինչպես, օրինակ, քաղաքական և կրոնական խմբերի, սոցիալական մեդիա հարթակների, արվեստի հաստատությունների կողմից իրականացվող գրաքննությունը: Ստեղծագործական ազատությունը սահմանվում է որպես «պետական գրաքննությունից, քաղաքական միջամտությունից կամ ոչ պետական դերակատարների ճնշումներից զերծ, տարբեր մշակութային դրսևորումներ երևակայելու, ստեղծելու և տարածելու ազատություն» (ՅՈՒՆԵՍԿՕ, 2018): Առանց գրաքննության ստեղծագործելու իրավունքը, ստեղծագործական աշխատանքի աջակցությունը, տարածումը և վարձատրումը, տեղաշարժի ազատությունը, միավորման ազատությունը, սոցիալական և տնտեսական իրավունքների պաշտպանությունը և մասնակցությունը մշակութային կյանքին՝ պաշտպանված են միջազգային իրավունքով՝ որպես ստեղծագործական ինքնարտահայտման ազատության մաս:

Հայաստանը, որպես փոքր հետխորհրդային պետություն, որն իր անկախության տարիներին ունեցել է այնպիսի մարտահրավերներ, ինչպիսիք են պետականության ստեղծումը, հարևանների հետ հակամարտությունները և քաղաքական իրարանցումները, ավելի շատ հետազոտվել է քաղաքական և սոցիալական հարացույցով, իսկ մշակույթի և արվեստի առումով այնքան էլ ուշադրության չի արժանացել և բավականաչափ ուսումնասիրված չէ: Թեև հասարակությունը հոգևոր և խոսույթային առումով միշտ էլ մեծ կարևորություն է տվել տեղական մշակույթին ու արվեստներին, քաղաքական և ավելի գործնական համակարգային վերլուծության և քաղաքականության մշակման

մակարդակում այն սովորաբար հետ է մղվել առաջնահերթությունների ցանկում: Հաշվի առնելով խորհրդային ժառանգությունը, ինչպես նաև համակարգային կոռուպցիան, որը նախորդ տասնամյակների կառավարման հիմնական մեխանիզմն է եղել, զարմանալի չէ, որ մշակութային ոլորտը շահույթի հետապնդման և ֆինանսական միջոցների յուրացման շահավետ հարթակ է դարձել որոշ խմբերի համար: Չնայած այս ամենին՝ հետազոտողների խնդիրն է բացահայտել, թե այս զարգացումներն ինչպես են ազդել մշակութային ոլորտի վրա՝ լայն իմաստով, և արվեստների՝ մասնավորապես, և հասկանալ, թե որոնք են այս թվացյալ փխրուն ոլորտի ներկայիս կարիքները:

Հետազոտողի դիտարկումները

Հետազոտության նպատակն է քննարկել հայաստանյան արվեստի ոլորտում առկա խնդիրներից մեկը՝ ստեղծագործական ազատությունը: Իհարկե, այս հետազոտության շրջանակը լայն է, և արդյունքում հնարավոր չի լինի հեռահար եզրահանգումներ անել, այնուամենայնիվ, այն կբացահայտի, թե ինչպես են արվեստի ներկայացուցիչներն ընկալում իրենց արտահայտման ազատությունը, ու կառաջարկի այն ոլորտներն ու բացերը, որոնք հետագա հետազոտության կարիք ունեն: Այսպիսով, ընթերցողն այս հետազոտությունը չպետք է ընկալի որպես «դեղատոմս», այլ որպես քարտեզ, որի միջոցով հնարավոր կլինի բացահայտել Հայաստանում ստեղծագործական ազատությանն առնչվող արդի խնդիրները: Այս աշխատության նպատակը Հայաստանի արվեստի ոլորտի համապարփակ պատկերը տրամադրելը չէ. այն մասնավորապես ուսումնասիրում է ստեղծագործ համայնքի ստեղծագործական ազատության սահմանափակումների վերաբերյալ ընկալումները: Գիտակցելով, որ տեղական արվեստի ոլորտը բոլորովին էլ անթերի չէ, ընթերցողը չպետք է հետազոտությունն ու դրանում նշված խնդիրներն ընկալի որպես արվեստի ոլորտի համապարփակ նկարագրություն: Ընդհակառակը, չնայած ՔՈՎԻԴ-19-ին, 2020-ի պատերազմին, դրան հաջորդած քաղաքական ճգնաժամին՝ անկախ Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ հայկական ֆիլմ է առաջադրվել Կաննի կինոփառատոնում, հայ հեղինակը ԵՄ գրական մրցանակն է շահել, ավելացել են նոր ստեղծագործական նախաձեռնությունները և աջակցության ծրագրերը:

Վերջին դիտարկումն այն է, որ հետազոտությունը շեշտադրում է արվեստի ոլորտը, ոչ թե ընդհանուր մշակութային ոլորտը: Այսպիսով, մշակութային ժառանգությանը, մշակութային արդյունաբերությանը, զբոսաշրջությանը, ավելի ընդարձակ մշակութային վեկտորներին, աշխարհայացքին առնչվող հարցերը դուրս են մնացել այս հետազոտության շրջանակներից, և դրանք հիշատակվել են այնքանով, որքանով վերաբերելի են համարվել ուսումնասիրված նյութերում և հարցազրույցներում:

Հարկ է նշել, որ *Եզրակացություններ և քննարկում* բաժնում արտահայտված տեսակետները բացառապես հիմնված են ուսումնասիրված նյութերի և հարցազրույցների վրա և չեն արտահայտում հետազոտողի կարծիքը:

Տվյալներ, աղբյուրներ և մեթոդ

Այս հետազոտության նպատակն է հասկանալ, թե ինչպես են արվեստի ոլորտի տարբեր ներկայացուցիչներ ընկալում ստեղծագործական ազատությունը Հայաստանում և որ խնդիրներն են առանձնացնում որպես իրենց գործունեության խոչընդոտներ:

Նախքան մեթոդին անցնելը կարևոր է ընդգծել, որ Հայաստանի արվեստի ոլորտի մեծագույն խնդիրներից մեկը թերի հետազոտված լինելն է: Ո՛չ մասնավոր կազմակերպությունները, ո՛չ էլ պետությունը համակարգված հետազոտություններ չեն իրականացրել նույնիսկ որոշակի արվեստի տեսակների մակարդակում: Միայն կան ժամանակ առ ժամանակ շրջանառվող հատուկենտ հետազոտություններ, որոնք, սակայն, բավարար չեն ոլորտի մասին պատկերացում կազմելու համար:

Սույն հետազոտությունը որակական մեթոդի կիրառման միջոցով փորձում է հասկանալ՝ ինչպես են արվեստագետները գնահատում իրենց իսկ արտահայտման ազատությունը: Վերլուծության համար ուսումնասիրվել են տվյալների երկու խմբեր.

1) ***արվեստի ոլորտի ներկայացուցիչների շուրջ 230 առցանց հասանելի հարցազրույցներ.*** **այս հարցազրույցների հիմնական (բայց ոչ միակ) չորս աղբյուրներն էին՝ Հայաստանի Հանրային ռադիոյի «Վերնատուն» հաղորդաշարը, Սպուտնիկ Հայաստանի «Արթբոքսը», Բուն TV-ն և Ալիք մեդիայի**

«Ալիքի վրա» հաղորդաշարը: Այս աղբյուրները պարբերաբար հարցազրույցներ են անցկացնում ոլորտի ներկայացուցիչների հետ՝ արձանագրելով և արտացոլելով հայաստանյան ստեղծագործ ոլորտի զարգացումները:

2) ***18 խորքային հարցազրույցներ արվեստի ոլորտի ներկայացուցիչների հետ.*** **հետազոտության շրջանակներում անցկացվել են խորքային հարցազրույցներ անկախ արվեստագետների, Հայաստանի տարբեր մարզերի երիտասարդ արվեստագետների, արվեստի քննադատների, արվեստի հաստատությունների ներկայացուցիչների, ՀԿ-ների և փաստաբանի հետ: Մասնակիցների ամբողջական ցուցակը կարելի է տեսնել Աղյուսակ 1-ում:**

Ի լրումն այս երկու խմբի՝ հետազոտությունը հաշվի է առել տպագիր և առցանց մամուլում առկա վերաբերելի հոդվածները, վիճակագրական տվյալները, միջազգային ծրագրերի հաշվետվությունները, արվեստագետների և արվեստի քննադատների հակիրճ հետազոտություններն ու ըստ պահանջի՝ այլ առցանց նյութեր:

Հավաքված տվյալները բովանդակային վերլուծության են ենթարկվել, և արդյունքները խմբավորվել են ըստ ստեղծագործական ազատությանը վերաբերող խնդիրների: Հաջորդ բաժնում մանրամասն ներկայացված է դրանցից յուրաքանչյուրը (արդյունքներն ըստ կարևորության չեն դասակարգված):

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ընդհանուր տեղեկություն և դիտարկումներ

Հետազոտության արդյունքները քննարկելուց առաջ անհրաժեշտ է ներկայացնել այն շրջադարձային կետերը, որոնք վերջին տարիներին ազդել են մշակութային ոլորտի վրա: Խորհրդային Միության փլուզումից հետո հայաստանյան մշակութային ոլորտում գերակշռել է իներտ շարունակականությունը (path-dependency), և կառավարման տրամաբանությունը մեծապես անփոփոխ է մնացել: 1930-ականներից սկսած՝ խորհրդային արվեստի կառավարման հիմնական մոդելը հիմնված է եղել ստեղծագործական միությունների վրա, որոնք մշակութային համայնքը կառավարելու ու այն կուսակցության բյուրոկրատական կառույցների գաղափարախոսական պահանջներին ենթարկելու արդյունավետ մեխանիզմներ էին: Նպատակն էր մշակութային գործունեությունը կաղապարել այս պետական հիմնարկների շրջանակներում և սահմանափակել ցանկացած ազատ/ինքնազբաղ մտավոր ու մշակութային գործունեության դրսևորումները: Միությունների տրամադրության տակ էին մի շարք ենթակառուցվածքներ, ինչպիսիք են պարբերականները, արվեստանոցները, հրատարակչությունները և այլն, և այդ էկոհամակարգից դուրս գտնվողները գործելու, տպագրվելու և ցուցադրվելու հնարավորություն չէին ստանում: Ավելորդ է խոսել ԽՍՀՄ-ում ստեղծարար համայնքների վրա բանեցվող բովանդակային սահմանափակումների մասին, որոնք արվեստագետին ստիպում էին պահպանել գաղափարախոսական կոռեկտությունը, լայն զանգվածներին հասանելիությունը և կուսակցական պատշաճ ոգին: Միևնույն ժամանակ, միության անդամները դեմ չէին վայելել դիրքից բխող արտոնությունները. կարգավիճակ, կապեր

(երկուսն էլ մեծապես կարևորվում էին ԽՍՀՄ-ում), ինչպես նաև հասարակ բնակչությանն անհասանելի խանութներից և ապրանքներից օգտվելու հնարավորություն, առանձնատների սեփականություն, արձակուրդ, առողջարանային հանգիստ, հատուկ առողջապահական ծառայություններ և նույնիսկ արտասահմանյան ապրանքներից օգտվելու հնարավորություն (կախված անդամակցած միությունից և աշխարհագրությունից) (Sanders, 2015):

Հայաստանն, իհարկե, այս ամբողջ համակարգի մի մասն էր՝ գործող հինգ ստեղծագործական միություններով: Անկախությունից հետո վերջիններս ձեռք բերեցին հասարակական կազմակերպությունների կարգավիճակ և սկսած 2019-ից՝ հիմնեցին Ստեղծագործական միությունների խորհուրդը: Չնայած պետական նշանակալի աջակցությանը՝ խորհուրդը պարբերաբար ձգտում է հատուկ կարգավիճակ ստանալ, որը պետությանը կպարտավորեցներ արտոնություններ տալ անդամ միություններին (Դանիելյան Ս., 2020): Նախորդ իշխանությունների օրոք պետությունն իր քաղաքականությունը ուղղում էր դեպի այս միությունները և արտոնում էր պետական հովանավորչությունը վայելող մի խումբ արվեստագետների՝ մշակույթին հատկացված միջոցները որպես որոշակի շրջանակների համար դյուրին եկամուտ օգտագործելով: Ինչ-որ առումով, սա արվեստի կառավարման խորհրդային ավանդույթի շարունակությունն էր. որոշ ստեղծագործական համայնքներ պետության հետ մտնում են փոխշահավետ գործարքի մեջ: Ինչ վերաբերում է գրաքննությանը՝ իրավիճակն անկախությունից հետո բարելավվեց. խորհրդային մանրազնին գրաքննությունն այլևս չէր գործում, սակայն արվեստի որոշ ձևեր և բովանդակային երանգներ (հատկապես՝ քաղաքական) խստորեն հսկվում էին: Արվեստի ոլորտի ազատականացման և գրաքննության առումով, 2018-ից հետո իրավիճակը բարելավվեց, այնուամենայնիվ, իներտ շարունակականությունը դեռևս շարունակում է մնալ: Պետական ճնշումները փոխարինվեցին հասարակական ճնշումներով. անկախությունից հետո գերակշռող խոսույթը պտտվում էր ազգայնական պատումների շուրջը (ներառելով դրա բոլոր «երանգները»)՝ արտոնելով սահմանափակ թվով ավանդական ստեղծագործական խմբերին և գրաքննության ենթարկելով (երբեմն էլ թիրախավորելով) քննադատական տեսակետները:

Հայաստանի նորագույն պատմության մեջ արվեստի ոլորտի առաջին շրջադարձային կետը 2018-ի Թավշյա հեղափոխությունն էր: Համազգային բողոքի այս ցույցերն ու նախորդ վարչակարգը տապալելու հաջողությունը ժողովրդավարության և, մասնավորապես, արվեստագետների համար՝ մշակութային ոլորտի ազատականացման հույսեր արթնացրին: Այս իրադարձությունների կարևորությունը մեծ էր արվեստագետների համար, քանի որ սկսած 2000-ականների կեսերից՝ նրանցից շատերը ջանքերը միավորել էին քաղաքացիական հասարակության հետ՝ փորձելով դիմադրել աստիճանաբար աճող ավտորիտարիզմին, կոռումպացված վարչակարգերին, և սոցիալական բարեփոխումների հասնել: 2018-ի ցույցերի հաջող ավարտից հետո արվեստագետներն ակնկալիքներ ունեին, որ ոլորտն ավելի ազատ կդառնա, ու պետական մշակութային քաղաքականությունում բարեփոխումներ կլինեն, հատկապես հաշվի առնելով, որ նորընտիր վարչապետ Փաշինյանը կարծես թե մեծ կարևորություն էր տալիս անկախ արվեստագետներին (դա դրսևորվում էր արվեստի ոլորտի՝ նախկինում լուսանցքայնացված ներկայացուցիչների հետ հանդիպումների և քննարկումների կազմակերպմամբ): Այնուամենայնիվ, այս խոստումները չառարկայացան, և քաղաքական դիսկուրսի ընդհանուր բևեռացման հետ մեկտեղ՝ արվեստագետների հույսերը չարդարացվեցին: Չնայած Մշակույթի նախարարության կողմից որոշ փոքրածավալ կարևոր ծրագրեր իրականացվեցին ՝ դրանք որևէ համապարփակ տեսլականի կամ բովանդակային քաղաքականության չհանգեցրին:

Հաջորդ ուղենիշը ՔՈՎԻԴ-19 համավարակն էր, որը զգալի բացասական, բայց և դրական ազդեցություն թողեց ոլորտի վրա: Ինքնամեկուսացման նախնական փուլը հարաբերականորեն դրական կարելի է գնահատել, քանի որ այն արվեստագետին նոր նյութ, ինչպես նաև ինքնահայեցման ու արարման ժամանակ տրամադրեց: Դրա հետ մեկտեղ, նրանք հնարավորություն և շահագրգռվածություն ստացան իրենց արվեստը տեխնոլոգիական գործիքների կիրառմամբ փորձարկելու, ինչն, իր հերթին, ավելի լայն հնարավորություններ ընձեռեց միջազգային համագործակցության համար: Եթե մինչ ՔՈՎԻԴ-19-ը միջազգային միջոցառումներին մասնակցելը մեծ ծախսերի և ճամփորդությանն առնչվող բյուրոկրատական նախապատրաստությունների հետ էր կապված, դրանից հետո շատ միջոցառումներ առցանց

մասնակցության հնարավորություններ ստեղծեցին: Մյուս կողմից, համավարակը պետական մշակութային քաղաքականության շատ բացեր վեր հանեց, հատկապես օրենսդրության ոլորտում. դրանցից ամենակարևորն ինքնազբաղ արվեստագետների գործունեության բացարձակ խաթարումն էր, որն էլ բացահայտեց նրանց խոցելիությունը և սոցիալական պաշտպանության բացակայությունը:

Քաղաքական իրարանցման և համավարակի պայմաններում համայնքն առերեսվեց մեկ այլ ցնցման՝ 2020-ի պատերազմին, որը ևս մեկ շերտ ավելացրեց ոլորտում արդեն իսկ առկա հիասթափությանն ու լճացմանը: Անձնական և հավաքական տրավմայի, ինքնության ճգնաժամի ու երկրում կատարված դրամատիկ փոփոխության արդյունքում արվեստագետները կորցրին ոլորտի ազատականացման հետ կապված հույսերը՝ հաշվի առնելով հավանականությունը, որ ազգայնական սգի (nationalist grievance) խոսույթը ևս մեկ անգամ կստվերի քննադատական ձայները:

Այս ամենով հանդերձ, կարևոր է նշել, որ ի տարբերություն մինչ 2018-ը ընկած ժամանակահատվածի, արվեստագետների շրջանում կա համակարծություն, որ ստեղծագործական ազատության լուրջ խոչընդոտներ այժմ չկան: Հարցը, սակայն, այն է՝ արդյոք կա՞ն մեխանիզմներ, հաստատություններ, համապատասխան միջավայր ու բաց հարթակներ՝ արարելու և իրենց աշխատանքները տարածելու, տրավման հաղթահարելու, ռեֆլեքսիայի և իրենց դերը վերաարժեվորելու համար: Հարցված արվեստագետների մեծ մասն արվեստի ոլորտը համարում է լճացած՝ որևէ նշանակալի փոփոխությունից կամ բարելավումից զուրկ: Սա չի նշանակում, որ որևէ ներուժ կամ զարգացում ընդհանրապես չկա, սակայն որպես այդպիսին՝ չկա համակարգված զարգացման ուղի: Ավելին, չկան հաստատություններ, որոնք կհամակարգեն ոլորտի փոփոխությունները: Թե՛ բացասական, թե՛ դրական փոփոխությունների հանգեցնող բոլոր նախաձեռնություններն իրականանում են անհատների կամ առանձին կազմակերպությունների շնորհիվ, ինչը, ըստ արվեստագետների, բավարար չէ ոլորտի դինամիկայի վրա ազդեցություն թողնելու համար: Քանի որ արվեստի յուրաքանչյուր ճյուղ բացառիկ է զարգացվածության մակարդակի և ներուժի առումով, մասնագիտական խմբերը խնդիր ունեն հետազոտելու առանձին ոլորտներում առկա զարգացման միտումները, որոնք կարող են միմյանցից մեծապես տարբեր լինել:

Պետական մշակութային քաղաքականության խնդիրները

Հայաստանի Հանրապետության մշակութային քաղաքականության մշակման և իրագործման համար պատասխանատու գործադիր մարմինը Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն (ԿԳՄՍՆ) է: Մինչ 2019 թ. Մշակույթի նախարարությունն առանձին մարմին էր, սակայն 2019 թ. կառավարության օպտիմալացման արդյունքում այն միավորվեց երկու այլ նախարարությունների հետ: Նախարարության նոր ձևաչափն ունի մշակույթին առնչվող երեք վարչություն. Մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչություն, Ժամանակակից արվեստի վարչություն և Պատմության և մշակութային հուշարձանների պահպանության վարչություն (ՀՀ ԿԳՄՍՆ): Բացի կառուցվածքային և առանձին միավորներից, նախարարության գործառույթներն իրականացվում են շուրջ 70 պետական ոչ առևտրային կազմակերպությունների (թատրոններ, թանգարաններ, գրադարաններ, համերգասրահներ և կրթական հաստատություններ) և փակ բաժնետիրական ընկերությունների միջոցով (Գրիգորյան և ուրիշներ, 2017): Նախարարությունը համագործակցում է հասարակական կազմակերպությունների հետ, ինչպես նաև մասնակցում է միջազգային համագործակցությունների և ծրագրերի: Այն աշխատում է նաև տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների հետ և դրանց միջոցով: Պետական մշակութային քաղաքականության հիմնական ռազմավարական նպատակներն են՝ պահպանել, համալրել և հանրահռչակել մշակութային ժառանգությունը, զարգացնել ժամանակակից արվեստն ու կատարելագործել մշակութային կրթությունը (ՀՀ Կառավարություն, 2021):

Հարցվածների ընկալմամբ՝ ստեղծագործական ազատության հիմնական խոչընդոտներից մեկը պետական թերի մշակութային քաղաքականությունն է (կամ ինչպես շատերն են նշում՝ դրա բացակայությունը): Սոցիալիստական պետությունից անցումն անկախ պետության՝ պետական մշակութային քաղաքականության մեջ խոշոր վերանայումների և ընդհանուր առմամբ մշակույթի նոր ընկալման չի հանգեցրել: Պետությանը չի հաջողվել ազատականացնել մշակութային ոլորտը, ինչը նշանակում է, որ այն դեռ գործում է ՊՈԱԿ-ներին սուբսիդիաներ տրամադրելու և «GoNGO»-ների (ՀԿ-ներ, որոնք ֆինանսավորվում և/կամ ուղղորդվում են պետության կողմից,

և պետությունը նրանց վերաբերվում է որպես ՊՈԱԿ-ների) հետ սերտորեն համագործակցելու միջոցով: Այս համագործակցությունները, սակայն, չեն ստեղծվել գործնական նպատակներով, այլ ծառայել են որպես շահույթի հետապնդման, «խնամի-ծանոթ-բարեկամներին» արտոնելու և կոռուպցիոն ուղիներին տիրապետելու միջոցներ: Այս կազմակերպությունների թիվն անկախության տարիներին աճել է՝ որպես պետական միջոցները յուրացնելու կամ անարդյունավետ ընդլայնված աշխատակազմ պահելով՝ անձնական և խմբային շահերը սպասարկելու գործիք: Թեև 2018-ից հետո իրավիճակը բարելավվել է, նախարարության բյուջեի նշանակալի մասը դեռևս տրամադրվում է շուրջ 70 ՊՈԱԿ-ների և հիմնականում լուծում է արդեն իսկ գոյություն ունեցողի պահպանման հարցը, այժմ արդեն ոչ թե հիմնականում շահույթ ստանալու, այլ անհնազանդություններից խուսափելու համար: Խնդիրն այն է, որ իշխանությունները հետ կանգնեցին մշակութային ոլորտում բարեփոխումներ իրականացնելու մտադրությունից, երբ պետության կողմից հովանավորվող այս մշակութային ենթակառուցվածքների շուրջ 40 000 աշխատողներ փոփոխություն մտցնելու ամեն փորձի ընդդիմանում և իրենց դժգոհությունն էին հայտնում (Օհանյան, 2018):

Մինչև քաղաքականությանն առնչվող ավելի կոնկրետ հարցերի անդրադառնալը՝ կարևոր է ընդգծել, որ ստեղծագործական ազատության դրությունը մինչ 2018-ը և դրանից հետո նշանակալիորեն տարբեր է: Եթե 2018-ից առաջ կարելի էր պնդել, որ կա պետական գրաքննություն, ապա 2018-ից հետո այլևս այդպես չէ: «Հակահարված» և «Արտլաբ Երևան» արվեստագետների խմբերի անդամները պատմում են, թե ինչպես են իրենց քաղաքական և սոցիալական թեմաներով արվեստի գործերի պատճառով ապօրինաբար ձերբակալվել, եղել մշտական հսկողության տակ, իշխանությունից սպառնալիքներ ստացել ու հոգեբանական և ֆիզիկական հետապնդումների ենթարկվել: Այնուհանդերձ, որպես հեգնանք՝ այս քաղաքականության արդյունքում նրանց արվեստն է՛լ ավելի լայն ճանաչում էր ձեռք բերում, ուստի պետությունը ստիպված էր փոխել պայքարի ռազմավարությունը. արվեստագետներին ճնշելու փոխարեն արհամարհում էին, արվեստի գործերն ի հայտ գալուց անմիջապես հետո վերացվում էին, իսկ լուսաբանումը՝ սահմանափակվում: Ներկայիս Հայաստանում նման խիստ գրաքննություն այլևս չկա:

2018-ից հետո ևս մեկ կարևոր փոփոխություն եղավ. նախարարության ուշադրությունը արվեստագետների լոյալ խմբից շրջվեց դեպի նախկինում լուսանցքայնացված անհատներն ու խմբերը: Սա իրականացվեց մի շարք դրամաշնորհային ծրագրերի և բազային խնդիրների լուծման միջոցով, ինչպես, օրինակ, տարածքների վարձակալության վճարի իջեցումը, քաղաքական պաշտոնյաների ստեղծագործական որոշումների կայացման սահմանափակումը և, փոխարենը, մասնագիտական համայնքի ներկայացուցիչների ներգրավումը: Ի հավելումն, իշխանությունները, կարծես, այլևս չեն օգտագործում պետական ոչ առևտրային կազմակերպությունները որպես ընտրությունների կամ քաղաքական շահի հետապնդման գործիք (առնվազն ո՛չ այնքան, ինչքան նախկինում): Կարելի է պնդել, որ 2018-ից հետո ստեղծագործական ազատության առումով մշակութային ոլորտում բարեփոխումներ եղել են, սակայն ստորև ներկայացված են մի շարք խնդիրներ, որոնք դեռևս խոչընդոտ են արվեստի ոլորտի ներկայացուցիչների համար:

1. Արհեստավարժության պակաս

Ոլորտի ներկայացուցիչները նշում են, որ ներկայումս պետական հաստատություններն ունեն արվեստի ոլորտի վերաբերյալ համապարփակ գիտելիքի և արվեստի կառավարման պրոֆեսիոնալիզմի պակաս: Մշակութային ասպարեզը դեռևս պատշաճ կերպով քարտեզագրված չէ, և ոլորտին առնչվող հարցերը մնում են թերի հետազոտված: Նախարարությունը չունի արվեստագետների կարիքների ու արվեստի հաստատությունների վերաբերյալ խոր գիտելիքներ, ինչը նշանակում է, որ չի կարող նաև ունենալ ոլորտի զարգացման թիրախավորված քաղաքականություն: Թեև փորձեր եղել են ներգրավել մասնագետների և տրամադրել մի շարք դրամաշնորհներ, սակայն մոտեցումը մնացել է բավականին խնդրահարույց և անկազմակերպ: Արվեստի բնագավառի շատ ներկայացուցիչներ նախարարության փոքրածավալ ծրագրերը համարում են դրական՝ միաժամանակ նշելով, որ այդ նախաձեռնությունները միասնական ռազմավարության մաս չեն, այլ ավելի շուտ առանձին ծրագրեր, որոնց ազդեցությունը համապարփակ կերպով հետազոտված, գնահատված և թիրախավորված չէ: 2018-ից հետո ներդրված դրամաշնորհային ծրագրերին չի հաջողվել հաղթահարել ֆորմալության առաջնայնությունն ու տերմինաբանության մակե-

ռեսային կիրառումը, ինչը նվազեցրել է այդ ծրագրերի արդյունավետությունը: Ծրագրերի շահառուներից շատերը, ինչպես նաև ընտրող հանձնաժողովի անդամները հաստատում են, որ պետության հետ համագործակցության գործընթացը խիստ բյուրոկրատական ու ոչ պրոֆեսիոնալ է եղել: Ստեղծագործողի և պետության միջև այս բացը հետագայում ավելի խորացավ՝ Մշակույթի, Կրթության և Գիտության նախարարությունների միավորման արդյունքում:

2018-ից հետո մասնագիտական շրջանակները քաղաքականության մշակման և փորձագիտական խորհրդատվություն տրամադրելու պատրաստակամություն են դրսևորել, բայց նրանց փորձերը հաճախ անտեսվել կամ առկախվել են: Հետևաբար, մասնագետները եզրակացրին, որ իրենց ձայնը լսելի չէ, և պետությունն անկախ հարթակները (հատկապես ժամանակակից արվեստի հաստատությունները) լուրջ չի ընդունում, և, այդպիսով, պետության հետ համագործակցությունը դառնում է անիմաստ: Պետությունը չի կարողանում ստանձնել ոլորտի կարգավորման իր դերը, և այն ավելի մասնակցային կդարձնի, հնարավորություններ, հարթակներ և ֆիզիկական տարածք կտրամադրի ստեղծագործողներին. այսպիսով, ոլորտի ներկայացուցիչները միայնակ են հոգում իրենց ստեղծագործական, ինքնաֆինանսավորման և կազմակերպչական հոգսերը: ՔՈՎԻԴ-19-ի, 2020-ի պատերազմի, ինչպես նաև տնտեսական և քաղաքական ճգնաժամի արդյունքում, մշակութային ոլորտն առաջիններից էր, որի բյուջեն կրճատվեց, և որի նկատմամբ պետական ուշադրությունը նվազեց, և այստեղից էլ տպավորությունը, որ մշակույթին բավականաչափ նշանակություն չի տրվում:

2. Թերի կառավարում և միջոցների սխալ բաշխում

Մշակույթի կառավարման վերոնշյալ «խորհրդային մոտեցման» արդյունքում պետությունը նշանակալի քայլեր չի ձեռնարկում՝ պարզելու, թե ինչպես է հնարավոր ազատականացնել արվեստի և մշակույթի ոլորտներից առնվազն մի քանիսը: Գիտելիքի պակաս կա, թե որ ոլորտներն ունեն անկախ զարգացման և հեռանկարային շուկա ունենալու հիմքեր, և հետևաբար բյուջեն նպատակային չի օգտագործվում այն բնագավառներում, որոնց ինքնաբավ գործելու հնարավորությունները սահմանափակ են: Արդյունքում, արվեստի մասնավոր

հաստատությունների թիվը սահմանափակ է, և դրանց զարգացումն ապահովելու համար չկա բարենպաստ քաղաքականություն:

Մյուս կողմից էլ, պետական ոչ առևտրային կազմակերպությունները, որոնք կնախընտրեին որոշ մակարդակի ինքնաֆինանսավորում և բարձր առևտրային գործունեություն, սահմանափակված են պետության խիստ կարգավորումների (թեև պետական ոչ առևտրային կազմակերպություններին առևտրային գործունեություն ձեռնարկելու որոշակի ազատություն տրամադրելու հարցում առաջընթաց եղել է) և թերզարգացած մշակութային շուկայի պատճառով (Դանիելյան, 2020): Ստացվում է, որ պետական քաղաքականությունն աջակցում է արվեստի ավելի ավանդական հաստատություններին՝ տրամադրելով միջոցներ, և չի խրախուսում արվեստի փորձարարական տեսակները: Այսպիսով, կան արվեստի ոլորտներ, որոնք արդեն «ճիշտ ուղու վրա են» և ունեն աշխատանքային կայուն մեխանիզմ, անցկացման վայրեր, հարթակներ, և այնպիսի ոլորտներ, որոնք պետք է ինքնուրույն գոյատևելու միջոցներ գտնեն:

3. Կենտրոնացված ոլորտ

Երկրի մշակութային կյանքը հիմանականում Երևանում է կենտրոնացած: Որոշ բացառություններով, մարզերը չունեն լուրջ ենթակառուցվածքներ, ներառյալ՝ արվեստի, կրթական հաստատություններ և արվեստի բնագավառում դինամիկ կերպով աշխատելու հնարավորություններ: Սա մի շարք խնդիրներ է առաջացնում, որոնցից առաջինը մշակութային ներկայացուցիչների արտագաղթն է Երևան և արտասահման: Մեկ այլ խնդիր էլ պահպանողական միջավայրն ու արվեստի կառավարման հնացած մոտեցումներն են: Արվեստի մարզային ներկայացուցիչները հաճախ բախվում են խիստ գրաքննության, քանի որ առաջնահերթություն է տրվում անձնական կապերին և պահպանողական մտածելակերպին: Հարցվածներից ոմանք հաստատում են, որ մարզերում մշակութային ոլոտում ինքնահաստատման համար բազմաթիվ արհեստական խոչընդոտներ են ստեղծվում, ինչպես նաև մեծ ճնշում կա շրջապատի և տեղական իշխանությունների կողմից: Մարզային երիտասարդության գործունեության հնարավորությունները սահմանափակված են, և նրանք զրկված են զարգացման համար անհրաժեշտ պատշաճ հարթակներից, քանի որ մարզային ենթակառուցվածքները, ինչպիսիք են մշակույթի տները կամ համապատաս-

խան տեղական կառավարման մարմինները, իրենց դերը ոլորտի զարգացման հարցում վերահաստատելու քայլեր չեն ձեռնարկում: Հետևաբար, կարելի է պնդել, որ պետական և տեղական մարմինների միջև կենտրոն-ծայրամաս հարաբերությունները թերի են կառավարվում, և մոտեցումները հաճախ իրարամերժ են:

4. Արվեստի հաստատությունների չկանոնակարգված գործունեությունն ու զարգացման ինստիտուցիոնալ խոչընդոտները

Ֆորմալ առումով, պետությունը պատասխանատու է ստեղծագործական ազատության ապահովման համար, բայց Հայաստանում չկան մեխանիզմներ, որոնք երաշխավորեն արվեստի հաստատությունների, ներառյալ՝ թանգարանների, թատրոնների, անցկացման վայրերի, միությունների, հրատարակչությունների և այլնի՝ ցանկացած տեսակի գրաքննությունից զերծ մնալը: Սույն հետազոտությունը հաստատում է, որ այս հաստատությունները թափանցիկության պակաս ունեն, ինչը նշանակում է, որ դրանցից շատերը իրենց կանոնակարգերի և ընտրության չափանիշների վերաբերյալ հանրությանը հասանելի տեղեկություններ չունեն: Շատ հաճախ արվեստագետներին չեն տրամադրում տարածքներ ստեղծագործ աշխատանքով զբաղվելու համար, քանի որ վարձակալը/սեփականատերը չի ընդունում նրանց ստեղծագործական մոտեցումները: Լինում են դեպքեր, երբ հրատարակչություններն առաջարկում են գրավոր ստեղծագործություններում փոփոխություններ անել՝ հակառակ դեպքում հրաժարվելով հրատարակել դրանք: Մեկ այլ օրինակ է, երբ որոշ հաստատություններ խիստ խտրական կամ կողմնակալ մոտեցում են ցուցաբերում արվեստագետների նկատմամբ՝ առանց հաշվի առնելու արվեստագետի աշխատանքը, այլ որոշումը պայմանավորում են նրա սոցիալական դիրքով, քաղաքական հայացքներով, արտաքնով և այլն: Մի լրացուցիչ շերտ էլ ավելանում է «կլանատիպ», նեպոտիստական և ինքնավերարտադրվող հաստատությունների միջև ներքին անհամաձայնությունների պատճառով, որոնք հրաժարվում են ներառական լինել: Մի կողմից, չկան արտադատական մեխանիզմներ այս խնդիրներով զբաղվելու համար, իսկ մյուս կողմից՝ դատական գործընթացները երկարատև են և հաճախ անարդյունավետ՝ անհրաժեշտ մասնագիտացման բացակայության պատճառով, ինչի արդյունքում արվեստագետները հայտնվում են շատ խոցելի իրավիճակում:

Ինստիտուցիոնալ գրաքննության աստիճանները տարբերվում են՝ կախված ոլորտից, որը մեկ այլ չհետազոտված հարց է:

Կան որոշ տեխնիկական և ինստիտուցիոնալ խոչընդոտներ, որոնք արվեստագետին թույլ չեն տալիս ազատորեն ստեղծագործել: Օրինակներից են՝ համաշխարհային դրամական փոխանցումների մեխանիզմի մաս չկազմելը, որը թույլ կտար աշխարհով մեկ վաճառել արվեստի գործեր կամ վարձատրվել թվային ստեղծագործությունների համար, Հայաստանում YouTube-ի մոնետիզացիայի, PayPal-ի բացակայությունը, միջազգային գործարքների բարձր գները և արտահանման/փոխադրման բարդ ու թանկարժեք ուղիները: Արվեստագետները նշեցին նաև, թե որքան բարդ է միջազգային միջոցառումների համար ճամփորդության կազմակերպումը, քանի որ բացի վիզա ստանալու խրթին ընթացակարգից՝ Հայաստանից ճամփորդելու ծախսերը բավական մեծ են:

Վերջին խնդիրն էլ այն է, որ պետության կոմպետենտության պակասի արդյունքում՝ բաց են թողնվում միջազգային համագործակցության հնարավորությունները: Որոշ արվեստագետներ նշեցին, որ պետությունը դժկամություն է ցուցաբերել համագործակցության առումով, եթե անգամ արվեստագետի օտարերկրյա ֆինանսավորումն արդեն ապահովվել է իսկ իշխանություններից ընդամենն ակնկալվել է թույլտվությունը, կազմակերպչական աջակցությունը: Ավելին, շատ դեպքերում, միջազգային ֆինանսավորումը պահանջում է պետության կողմից համաֆինանսավորում, և, այնուհանդերձ, միջոցների սահմանափակ հատկացումն անկախ հաստատություններին թույլ չի տալիս մասնակցել մի շարք համաֆինանսավորվող ծրագրերի:

«Արտլաբ» Երևանի ցուցահանդեսը Կապանում ցայտուն կերպով արտացոլում է վերոնշյալ խնդիրներից մի քանիսը: 2021 թվականի սեպտեմբերի 17-ին «Արտլաբ» Երևանը Կապանի Արվեստի թանգարանում (նախկինում անվանումը ներառում էր նաև «ժամանակակից» բառը, սակայն հետագայում հանվեց Կապանի քաղաքային իշխանությունների կողմից) կազմակերպել էր «Ապագայի սցենարներ» կոչվող ցուցահանդեսը: Ավելի ուշ պարզվեց, որ քաղաքային իշխանությունների հրահանգով՝ ցուցահանդեսի մի մասը հանվել է: Արվեստագետներից մեկի աշխատանքն էլ ար-

դեն ցուցադրվելուց հետո է հեռացվել, քանի որ մի հոգևորական վիրավորական է համարել դրա վրա եղած «սեքս» բառը: Մեկ այլ ստեղծագործություն էլ, որը ներկայացնում էր գլխիվայր կախված լուսանկարներ ու բացատրական տեքստ, ցուցասրահում կախվել է շիտակ՝ որպես «նորմալ» լուսանկարների սովորական համախումբ, իսկ տեքստը հեռացվել (Epress.am, 2021):

Օրենսդրական բացեր

ՔՈՎԻԴ-19-ի արդյունքում ի հայտ եկած ամենամեծ բացն անկախ/ինքնազբաղ (freelance) արվեստագետների բացարձակ սոցիալական խոցելիությունն էր: Ինքնամեկուսացման ընթացքում որոշ արվեստագետներ բարձրաձայնեցին, որ իրենք համավարակի պատճառով զրկվել են եկամտի աղբյուրներից, և որևէ տնտեսական աջակցության մեխանիզմ առկա չէ: Խնդիրն այն է, որ Հայաստանում անկախ արվեստագետները չեն գրանցվում և պաշտոնապես որևէ կերպ չեն նույնականացվում: Նրանք գրանցված աշխատանք չունեն, և եթե հնարավորություն է լինում, հիմնականում աշխատում են ծառայությունների մատուցման պայմանագրով, որը որևէ սոցիալական արտոնություն կամ ապահովագրություն չի տրամադրում: Սա նաև նշանակում է, որ նրանք չեն կարող պետական տնտեսական աջակցություն ակնկալել: Հենց որ այս խնդիրը բարձրաձայնվեց և տարածում գտավ առցանց մեդիայում և սոցիալական հարթակներում՝ ոլորտի որոշ ներկայացուցիչների հրավիրեցին այս խնդիրները քննարկելու նախարարության ներկայացուցիչների հետ: Հարցը մտավ խորհրդարանական նիստի օրակարգ, սկսվեցին առցանց քննարկումներ, հարցազրույցներ և այլն՝ փորձելով խնդրին լուծում տալ: Նախարարությունն սկսեց ինքնազբաղ արվեստագետների ռեեստր կազմել: Այդ ընթացքում ոլորտի 6-7 մասնագետներ կամավոր հիմունքներով աշխատում էին ինքնազբաղ արվեստագետների վերաբերյալ առկա միջազգային փորձի, քաղաքականությունների, օրենսդրությունների և սոցիալական փաթեթների ուսումնասիրության վրա՝ նախարարությանը խորհրդատվություն տրամադրելու նպատակով: Այս գործընթացները կասեցվեցին 2020-ի պատերազմի մեկնարկից հետո:

Միակ շոշափելի քայլը, որը նախարարությունն անմիջապես ձեռնարկեց, դրամաշնորհային ծրագրի բաց կանչ հայտարարելն էր,

որի նպատակն էր համավարակի ընթացքում աջակցել անկախ արվեստագետներին. այնուհանդերձ, դա նշանակալի ազդեցություն չունեցավ թիրախային խմբերին կարճաժամկետ լուծումներ տրամադրելու առումով (Ստեղծագործ Եվրոպա Հայաստան): Պատերազմի մեկնարկից հետո նախապես ծրագրված շուրջ 20 նախագծերի ֆինանսավորումը նվազեց մինչև 5-ը՝ առանց լուրջ բացատրության (նույնիսկ հանձնաժողովի անդամներին) և, արդյունքում, թափանցիկ որոշում կայացնելու այս պակասը խորացրեց նախարարության և ոլորտի ներկայացուցիչների միջև խզումը : Ճգնաժամի հետևանքով քաղաքականությունն անփոփոխ մնաց, իսկ քննարկումների արդյունքում նախաձեռնված փոփոխությունները մնացին առկախված: Իհարկե, պատերազմն իր ազդեցությունն ունեցավ այս գործընթացի վրա, բայց ցայսօր անհայտ է՝ արդյո՞ք ինչ-որ քայլեր ամփոփվել են, և առհասարակ որևէ գործընթաց կա՞ այս ուղղությամբ:

ՔՈՎԻԴ-19 համավարակի ընթացքում վճռական լինելուց զատ՝ ինքնազբաղ արվեստագետների խնդիրները բացեցին պանդորայի արկղը ՝ ի ցույց դնելով ստեղծագործողի կարգավիճակին, սոցիալական արտոնություններին, ընդհանուր սոցիալական պաշտպանությանը, ինչպես նաև հարկային պարտավորություններին առնչվող խնդիրները: Ինչպես արդեն նշվեց, արվեստագետները նախընտրում են աշխատել ծառայությունների մատուցման պայմանագրերով կամ որպես անհատ ձեռնարկատերեր: Այնուամենայնիվ, նույնիսկ այդ պայմանագրերում նրանք նախընտրում են բանավոր պայմանավորվել ավելի բարձր վարձատրության շուրջ, սակայն պայմանագրում նշել միայն դրա մի մասը՝ բարձր հարկերից խուսափելու համար: Խմբերի դեպքում շատերը նախընտրում են ունենալ ծառայությունների մատուցման մեկ պայմանագիր՝ մեկ անձի անունով, իսկ հետո ներքին կարգով եկամուտը բաշխել: Ինքնազբաղ արվեստագետների արդեն իսկ ցածր եկամուտը նրանց ստիպում է համաձայնել թե՛ պայմանագրի վատ պայմաններին, թե՛ պատվիրատուների խնդրահարույց պայմաններին: Այս առումով ինքնազբաղ արվեստագետները չունեն կայուն եկամուտ, սոցիալական արտոնություններ, հարկերի վճարման և իրավական պաշտպանություն ապահովելու որևէ պաշտոնական մեխանիզմ, որը կխրախուսի նրանց օրինականորեն գրանցել իրենց աշխատանքը:

Հեղինակային իրավունքի մասին օրենքում ևս բացեր կան, մասնավորապես՝ մշտադիտարկման և վերահսկման մեխանիզմների բացա-

կայությունը, որոնց նպատակն է կանխել հեղինակային իրավունքի խախտումներն ու խախտման դեպքում տույժեր կիրառել: Ներկայումս Հայաստանում հեղինակային իրավունքի գրանցման մշակույթն առայժմ այնքան էլ զարգացած չէ: Ավելին, նույնիսկ գրանցումից հետո էլ, չկա մարմին, որը հետևի խախտումներին անգամ ամենահեշտ կարգավորվող ոլորտներում: Օրինակ, հեռուստատեսային շատ ալիքներ և առցանց հարթակներ օգտագործում են արվեստագետների աշխատանքները (թե՛ տեղական, թե՛ օտարերկրյա)՝ առանց օգտագործման լիցենզիա ունենալու: Միակ ալիքը, որը հետևում է պաշտոնական ընթացակարգերին, Հանրային հեռուստաընկերությունն է: Սա նշանակում է, որ հեղինակները իրենց մտավոր սեփականության օգտագործման դիմաց որևէ փոխհատուցում չեն ստանում: Պաշտպանություն գտնելու միակ միջոցը դատական գործընթացն է, որից արվեստագետները խուսափում են:

Վերջապես, օրենսդրությունը կարևոր է ոչ միայն ոլորտում գործնական խնդիրներ լուծելու, այլև այս օրենքները միջազգային օրենքներին համապատասխանեցնելու առումով՝ միջազգային լայնածավալ ծրագրերից օգտվելու համար (հատկապես ԵՄ ֆինանսավորվող ծրագրերից): «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի մշակութային բաղադրիչին միանալուց հետո պարզ դարձավ, որ դրա մեդիա բաղադրիչին ևս միանալու համար հարկ է կինեմատոգրաֆիայի մասին օրենք ունենալ, համապատասխանեցնել աուդիովիզուալ մեդիայի վերաբերյալ օրենսդրությունը, և այլն: Այսպիսով, կինեմատոգրաֆիայի մասին օրենքը, որի հնարավոր բովանդակությունը մասնագիտական խմբերի կողմից բազմիցս առաջարկվել է նախարարությանը, կյանքի կոչվեց, թեպետ առանց էական քննարկումների: Սրանից բխող հարցն այն է՝ արդյո՞ք այլ ոլորտներ ևս կարիք ունեն թիրախավորված օրենքների, և, եթե այդպես է, ինչպիսի՞ն է լինելու դրանց բովանդակությունը: Արվեստի ոլորտում քննարկումներ են ընթանում օրենքների անհրաժեշտության մասին, որոնք ստեղծագործական շուկայի ձևավորման և առաջնահերթ ոլորտները հարկերից ազատելու հնարավորություններ կստեղծեն, սակայն հստակ չէ, թե որ սցենարներն են կիրառելի Հայաստանի դեպքում, և ինչպիսի արդյունքներ կարելի է ակնկալել:

Ոչ պետական դերակատարների քաղաքականությունն ու ճնշումը

2018-ի հեղափոխությունից և հատկապես 2020-ի արցախյան պատերազմից հետո Հայաստանի քաղաքական և սոցիալական խոսույթը խիստ բևեռացված է, այն աստիճան, որ ցանկացած հակադիր տեսակետ փոխադարձ թիրախավորման պատճառ է դառնում ո՛չ միայն սոցիալական մեդիայում, այլ նաև իրական կյանքում: Հեղափոխության արդյունքում ձևավորված համեմատական սոցիալական համերաշխությունը երկարատև կյանք չունեցավ. աճող հիասթափություն կառավարության կոմպետենտության հանդեպ, պետական հաստատությունները բարեփոխելու ձախողում՝ համակցված ընդդիմադիր ուժերի կողմից սադրանքներով և լրատվամիջոցների «միջամտություններով»: 2020-ի պատերազմն ու 2021-ի արտահերթ ընտրություններն այս ամենը հասցրին իրենց գագաթնակետին, երբ ընդդիմադիր ուժերից մի քանիսին հաջողվեց մտնել խորհրդարան՝ խորացնելով հանրային խոսույթի բևեռացումը: Կարևոր է հասկանալ, որ հանրային ընկալմամբ՝ հեղափոխությունը հիմնված էր ժողովրդավարական արժեքների վրա, որոնք ընդդիմության կողմից հաճախ միտումնավոր կերպով մեկնաբանվում էին որպես «բարոյապես խեղաթյուրված Արևմուտքի» կողմից ներմուծված գաղափարներ, որոնց նպատակն է նենգափոխել ընտանեկան արժեքները, «ԼԳԲՏ քարոզչություն» տանել և խրախուսել անընդունելի բարոյական և սեռական վարքագիծ (այս թեզը հատկապես շատ էր օգտագործվում, քանի որ նոր պետական պաշտոնյաներից շատերը նախկինում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ էին եղել, իսկ դա նախորդ վարչակարգերի օրոք որակվել է որպես սպառնալիք ավանդական արժեքների և Հայաստանի շահերի նկատմամբ): Հեղափոխությունից անմիջապես հետո լրատվամիջոցները հեղեղվեցին այս խոսույթով, այսպես կոչված՝ «հակահեղափոխական» խմբերի նախաձեռնությամբ: Սա կապելով արվեստագետների հետ՝ պետք է հասկանանք, որ Հայաստանում արվեստագետներն ու քաղաքացիական հասարակությունը 2000-ականների կեսերից սկսած սերտորեն համագործակցել են, և շատ արվեստագետներ ու մշակութային կազմակերպություններ ստացել են միջազգային ֆինանսավորում: Այսպիսով, ոչ ազգայնական արվեստի ցանկացած հանրային դրսևորում քաղաքական

տարընթերցման թիրախ դառնալու ռիսկ էր պարունակում: Այլ կերպ ասած՝ արվեստը կիրառվում էր որպես զենք՝ հակառակորդին վարկաբեկելու համար:

Արվեստը քաղաքական դիվիդենտներ շահելու նպատակով օգտագործելու ամենահայտնի դեպքը «ՀուՀանք ուՀանգ» կատարողական արվեստի նախագիծն էր, որը հետազոտությունների վրա հիմնված՝ 1920-ականների հայ ֆուտուրիստական պոեզիայի փորձարարական վերընթերցում էր և ֆինանսավորվում էր Մշակույթի նախարարության կողմից տրամադրված դրամաշնորհով: Այն պետք է իրականացվեր Հանրապետության հրապարակ մետրոյի կայարանի հարակից բաց տարածքում, որտեղ նաև իրականացվում էին նախապատրաստական փորձերը: Փերֆորմանսի վերջնական փորձն ընդհատվեց ակտիվիստների մի խմբի կողմից, որի արդյունքում բախումներ եղան: Նարեկ Սարգսյանը (Ադեկվադ կոչվող հայտնի «հակահեղափոխական» կազմակերպության անդամ) փորձեց «զելյոնկա» լցնել «Իմ Քայլը» խմբակցության քարտուղարի վրա, որը ծրագրի կազմակերպիչներից և աջակիցներից էր: Ավելի ուշ Սարգսյանը հայտարարեց, որ պայքարում է Հայաստանում արմատացող ԼԳԲՏ համայնքի, Ստամբուլյան կոնվենցիայի վավերացման և այլ արատավոր ու հակազգային բարքերի դեմ (Քոչարյան, 2019): Բանն այն է, որ ներկայացումը բացարձակապես կապ չուներ նշված թեմաներից որևէ մեկի հետ: Սա 2018-ից հետո արվեստը միտումնավոր կերպով քաղաքական նպատակներով օգտագործելու օրինակներից ընդամենը մեկն է:

Արվեստագետների հեղինակությանը վնաս է հասցվում նաև այս խմբերից մեկից կամ, անգամ, միջազգային կազմակերպություններից ֆինանսավորում ստանալու դեպքում: Թեև արվեստագետները ֆինանսավորման են դիմում միջոցների պակասի պատճառով, այլ ոչ թե այս կամ այն քաղաքական խմբի հետ համագործակցելու ցանկությամբ, ֆինանսավորումն ընդունելու նրանց որոշումը գրեթե միշտ մեկնաբանվում է որպես «ձայնը վաճառելու» և «պատվեր կատարելու» գործողություն, ինչի արդյունքում արվեստագետն ու նրա ստեղծագործությունը լուսանցքայնացվում և արժեզրկվում են:

Կրթական խնդիրներ և մասնագետների պակաս

Թեպետ այս հարցը հետազոտության շրջանակներում խորությամբ չի քննարկվում, կարևոր է նշել, որ Հայաստանում հումանիտար և սոցիալական գիտությունների (ինչպես նաև քննադատական մտածողության և հետազոտական հմտությունների) ընդհանուր ճգնաժամը ազդում է նաև մշակութային ուսումնասիրությունների վրա: Մշակույթի և արվեստի վերաբերյալ հետազոտությունները սահմանափակ են, խիստ կանոնականացված և շատ դեպքերում ոչ ակադեմիական:

Վերոնշյալն ազդում է նաև մասնագիտական կրթության վրա: Բուհերն ունեն այնպիսի մասնագետների պակաս, որոնք կուսուցանեն ժամանակակից մոտեցումներ և գործիքներ, մասնագիտական գրականության զգալի մասը հայերենով հասանելի չէ, կրթական հաստատությունները քաղաքականացված են, կրթության դերը թերի է գործնական հմտությունների ապահովման գործում: Վերջապես, մասնագիտական վերապատրաստումը համապատասխանեցված չէ շուկայի կարիքներին. որոշ մասնագիտություններ «սիրված են» ուսանողների կողմից՝ չնայած ցածր պահանջարկին, իսկ մյուսները բացակայում են՝ չնայած ոլորտն այդ մասնագիտությունների հրատապ կարիքն ունի: Սա նաև նշանակում է, որ շատ ուսանողներ ձգտում են նեղ մասնագիտական կրթություն ստանալ արտերկրում, բայց հետագայում նախընտրում են չվերադառնալ, քանի որ Հայաստանում իրենց որակավորման դիմաց շատ քիչ են վարձատրվում: Բացի այդ, տեղական ոլորտի ներկայացուցիչները հաճախ ստիպված են լինում գտնել նմանատիպ մասնագիտություն ունեցող, բայց այլ աշխատանքներ կատարելու համար ինքնակրթված մասնագետների՝ այս բացը լրացնելու համար: Այլ դեպքերում էլ նրանք պարզապես ստիպված են լինում փնտրել կարճ ուղիներ՝ արտադրության որոշ մասեր բաց թողնելու համար, ինչը հանգեցնում է ցածր որակի (օրինակ՝ Հայաստանում կա լուսային ռեժիսորների պակաս):

Ինչպես և ամենուր, Հայաստանում արվեստագետները պետք է սովորեն միջոցներ հայթայթել, դրամաշնորհների դիմել, տիրապետել բիզնես, մարքեթինգային և այլ գործիքների՝ իրենց կարիքները հոգալու համար, և, այնուհանդերձ, եթե զարգացած երկրներում այս գործիքներն ավելի հասանելի ու ներդրված են կրթության մեջ, ապա Հայաստանում՝ դեռ ոչ:

Հանրային գրաքննություն

Համաշխարհային արվեստի ժամանակակից աշխարհն առերեսվում է շատ տաբուների, հատկապես՝ արվեստի միջոցով «քաղաքականապես ոչ կոռեկտ», կրոնի, գենդերի և սեռականությանն առնչվող թեմաներին անդրադառնալիս: Սրանք, համաշխարհային մակարդակով, արվեստագետների համար դիտարկվում են որպես «ականապատ դաշտեր» (Redmond, 2020): Հայաստանը բացառություն չէ, ավելին, այս պարագայում հասարակությունն ստանձնել է գրաքննիչի դերը: Հարցվածները մեկ հարցի շուրջ համաձայնություն ունեն. արվեստի ոլորտը գործում է երկու հեգեմոն պատումների գերիշխանության ներքո՝ ազգայնականության (սկսած քաղաքացիական ազգայնականությունից մինչև արմատական) և մոդեռնիզմի: Սրանք հասարակության կողմից ընդունված են որպես անառարկելի իրականություններ, և մարդիկ անմիջապես արձագանքում են այն արվեստին, որը վեր է հանում այլընտրանքային տեսակետներ, տաբու թեմաներ և/կամ փորձարարական եղանակներ է կիրառում: Որոշ թեմաներ շատ զգայուն են՝ արվեստի միջոցով քննելու և բարձրաձայնելու համար: Դրանց թվում են գենդերային հարցերն ու սեռականությունը (հատկապես՝ ԼԳԲՏ թեմաները), շրջակա միջավայրի խնդիրները և կրոնական, ազգայնական գաղափարների կամ հայրենասիրության քննադատություն պարունակող տեսակետներ: Որպես օրինակ, կարելի է նշել «Kond gallery» սթրիթ արթ հարթակի դեպքը: Արվեստագետն Արարատ լեռան կողքին պատկերել էր «Մոլոտովի» կոկտեյլ: Ավելի ուշ տեղացիները մաքրել էին պատկերի մի մասը. «Մոլոտովը» ջնջել էին, բայց պահպանել Արարատը (Եղիազարյան, 2021):

Ի հավելումն, ներկայումս գերիշխում է խիստ ավանդական մտածելակերպը (որը մասամբ խորհրդային քաղաքականության արդյունքն է)[1]: Արվեստի տեսակները, որոնք գոյություն են ունեցել երկաթե վարագույրից անդին, այստեղ չեն եղել, հետևաբար ժամանակակից արվեստն ու արվեստի փորձարարական տեսակները պարարտ հող չեն

1 Կարևոր է նշել, որ կա Հայաստանի մշակույթի, տարբեր պատմական ժամանակաշրջանների օրոք դրա զարգացումների, դրա կրած արևելյան և արևմտյան ազդեցությունների խոր ուսումնասիրության անհրաժեշտություն, և թե ինչպես են այդ միտումներն ազդել ոլորտի վրա: Այս հետազոտությունը խորամուխ չի լինում վերլուծության արդյունքում հավաքված պնդումների հիմքերի մեջ, և ընթերցողը չպետք է այս մշակութային եզրահանգումներն աներկբա ընդունի, քանի որ դրանք կարող են շատ պարզեցված լինել:

ունեցել զարգանալու համար: Ավանդական արվեստի և կրթական մի շարք հաստատություններ, ինչպես նաև լրատվամիջոցները, խթանում են ազգայնական հարացույցն ու, գործելով խորհրդային իներցիայով, ստեղծում են «ամոթի» հասարակություն, որտեղ, թիրախավորված լինելու վախի պատճառով, սահմանափակված է արվեստագետների ազատ արտահայտվելու կարողությունը: Սա հանգեցնում է մեկ այլ խնդրի, որը կարող ենք կոչել արվեստի կանոնականացում:

Խորհրդային ժառանգությունը հասարակությանն (այդ թվում՝ արվեստի ոլորտի ներկայացուցիչներին) ուղղորդում է արվեստի սահմանափակ ըմբռնման, որը դուրս է թողնում ժամանակակից, կոնցեպտուալ փորձարարական արվեստը և արտահայտման այլ նոր ձևերը: Ըստ այդ տրամաբանության՝ արվեստը պետք է լինի վեհ և ներդաշնակ, ինչպես դա Վինչիին կամ Ռուբենսն են ստեղծագործել: Հետևաբար, այլընտրանքային արվեստը ցուցադրվում է միայն ժամանակակից արվեստի լեգիտիմացված հաստատություններում, որտեղ դիտողն ակնկալում է տեսնել արվեստի նման տեսակներ, սակայն երբ այդ արվեստը դուրս է գալիս այդ հաստատություններից՝ այն պիտակվում է որպես խեղթություն: Եվ հակառակը, ազգային արվեստը այնքան է սրբացվում, որ որևէ քննադատական կարծիք չի ընդունվում «մեծ հայերի» հասցեին, ովքեր հասարակության կողմից ընկալվում են որպես հայկական մշակույթի ռահվիրաներ (այս «մեծ հայերը» հիմնականում արդեն ողջ չեն և թաղված են Կոմիտասի անվան պանթեոնում): Այսպիսով, կա արվեստի «ապապանթեոնականացման»[2] անհրաժեշտություն, որը թույլ կտա և՛ ավելի լավ ուսումնասիրել հայկական մշակույթը, և՛ ավելի բաց լինել արվեստի նոր ձևերի ու բովանդակության հանդեպ (մշակույթը որպես մեռած և սուրբ երևույթ ընդունելու փոխարեն):

Երկխոսության պակաս

Հաջորդ խնդիրը երեք տարբեր հարթություններում առկա երկխոսության պակասն է:

ա) Երկխոսություն և համագործակցություն արվեստագետների խմբերի միջև. հարցվածներից շատերը նշեցին, որ արվեստի տարբեր շրջանակների միջև գոյություն ունեն անառողջ

2 Տերմինն օգտագործում է Տիգրան Պասկևիչյանը:

մրցակցության բազմաթիվ շերտեր (կրկին՝ կախված որոշակի ոլորտից): Սա հիմնականում կապված է ինքնահաստատման և ոլորտում գերակա դիրք զբաղեցնելու փորձերի հետ: Շատ հաճախ հիմնական պատճառը միջոցների համար մրցակցությունն է, այնուհանդերձ, դա հակառակ կողմ էլ ունի. համագործակցության պակասը սահմանափակում է համատեղ նախաձեռնություններին մասնակցելու հնարավորությունները, ինչպես նաև խանգարում է, որ այս խմբերը կոլեկտիվ կերպով ազդեն պետության ու արվեստի հաստատությունների վրա, որպեսզի վերջիններս ոլորտում ավելի բարենպաստ քաղաքականություն ստեղծեն:

Որոշ ոլորտներում միջսերնդային մրցակցություն և սերունդների միջև ստեղծագործական մոտեցումների նկատմամբ փոխմերժում է առկա: Խնդիրների այս համախումբը թույլ չի տալիս նաև համատեղ ուժերով ստեղծել ընդհանուր ստեղծագործական և հետազոտական կենտրոններ: Ի լրումն, ոլորտի նորեկներն արվեստի բնագավառում ներգրավվելու դժվարությունների են բախվում, որովհետև իրենց չեն տեսնում արդեն իսկ հիմնված «բանակների» համակարգում:

բ) Տեղական արվեստի ոլորտն ու տարածաշրջանային/համաշխարհային արվեստի աշխարհը. Հայաստանի արվեստի ոլորտը, ձևավորվելով ազգայնական հարացույցի շրջանակներում, հաճախ «ինքնասիրահարված» է՝ չափազանցնում է սեփական արժեքը: Առաջին հերթին՝ սա արվեստագետներին թույլ չի տալիս իրենց դիտարկել տարածաշրջանային և համաշխարհային արվեստի զարգացումների համատեքստում և որտեղ հնարավոր է՝ դաս քաղել լավագույն փորձից: Եվ երկրորդ, այս ինքնընկալումը խոչընդոտում է օտարերկրյա շահագրգիռ կողմերի հետ ամուր կապեր ստեղծելուն, որը միգուցե ավելի լայն հնարավորություններ կարողանար ընձեռել[3]:

3 Ռուսաստանի՝ Ուկրաինա ներխուժումից հետո ռուսական արվեստի և հումանիտար գիտությունների բազմաթիվ ներկայացուցիչների ներգաղթով պայմանավորված՝ ոլորտում նոր դինամիկա է նկատվում, որի հետևանքները պետք է ուսումնասիրել: Առաջին հայացքից՝ կարող ենք տեսնել տեղական արվեստի նախաձեռնություններին մասնակցության աճ (օրինակ՝ Ոսկե ծիրան, ցուցահանդեսներ և այլն), բաց դասախոսությունների միջոցով փորձի փոխանակում, արվեստի նոր նմուշների ստեղծում (օրինակ՝ սթրիթ արթի, լուսանկարչության ոլորտներում) և այլն: Այս ամենն անխուսափելիորեն կազդեն արվեստի տեղական ոլորտի վրա:

գ) Արվեստագետներն ու լսարանը. հարցվածներից շատերը հաստատում են, որ մշակութային միջոցառումների լսարանը սահմանափակ է, և հազվադեպ կարելի է նոր դեմքեր տեսնել: Սա ցույց է տալիս, որ արվեստը հանրայնացված չէ, և դժվար է այն ներդնել հանրային բնականոն կյանքի մեջ:

Լսարանի հետ երկխոսության պակասը հատկապես նկատելի է ժամանակակից արվեստի պարագայում: Հարցվածներից մեկի ձևակերպմամբ՝ հանրությունն ու ժամանակակից արվեստը երկու զուգահեռ իրականություններում են ապրում, և այդ իրականությունները խիստ հազվադեպ են հատվում: Քանի որ տասնամյակներ շարունակ հասարակությանը չեն խրախուսել մշակութային առումով ակտիվ լինել և քննադատական մոտեցում ցուցաբերել արվեստին, այն հապաղում է և չի կարողանում ընկալել արվեստում կատարվող փոփոխությունները: Այսպիսով, երբ արվեստի այս նոր տեսակներն ու բովանդակությունը դուրս են գալիս արվեստի լեգիտիմացված հաստատությունների սահմաններից և հայտվում են հանրային տարածքում, դրանք ցնցում են լսարանին: Ինչպես հարցվածներից մեկը նշեց՝ «Ասես, հացի փռում ծխախոտ վաճառես»:

Արվեստի քննադատության պակաս

Էմմա Հարությունյանի՝ «Երևան» ամսագրում հրատարակված հոդվածը կոչվում է «Չկա քննադատություն», և առաջին պարբերությունում ասվում է. «Մի օր որևէ մեկը պետք է սա աներ: Ինձ վրա եմ վերցնում բոլոր պիտակները՝ «չուզող», «վատամարդ» (շարունակել ցանկը ըստ հայեցողության) և հանգիստ սրտով ձեզ եմ ներկայացնում մի ցուցահանդեսի մասին քննադատական հոդված: Ի դեպ, մեր իրականության մեջ քիչ հանդիպող երևույթ, որը, սակայն, իմ համոզմամբ՝ չափազանց կարևոր է, և հիմա կպատմեմ ինչու»: (Հարությունյան, 2021)

Այս հատվածը համընկնում է հարցվածների մեծամասնության կարծիքի հետ, ովքեր պնդում են, որ արհեստավարժ և բովանդակալից արվեստաբանության բացակայությունը խոչընդոտ է հանդիսանում արվեստի ոլորտի զարգացման համար: Նրանք նույնպես այն կարծիքի են, որ քննադատությունը արվեստի ստեղծման և շրջանառության եռակողմ մեխանիզմի միջին շերտն է, որը բաղկացած է արվեստագետներից, հանրությունից և արվեստի քննադատներից: Վերջիններս

պետք է որպես ցանց ծառայեն մյուս երկու շերտերի միջև և իրականացնեն արվեստի գործերը բացատրելու, պարզաբանելու և քննարկելու գործառույթը:

Այս բացի պատճառներից մեկն այն է, որ մեդիայում չկան մասնագետներ, ովքեր կիրթ կերպով կներկայացնեն արվեստագետների աշխատանքը: Այս թեմաներով գրողների մեծամասնությունը արվեստի ոլորտի մասնագետ չէ, ուստի հաճախ սխալ է մեկնաբանում բովանդակությունն ու համատեքստը: Չկան լրատվամիջոցներ, որոնք վճարովի հաստիքներ ունեն արվեստի քննադատների համար՝ այդպիսով կորցնելով հասարակական կյանքի մի ամբողջ ոլորտ, իսկ հասարակությունն էլ այս ոլորտի հետ մատչելի լեզվով առնչվելու հնարավորություն չի ստանում: Մյուս կողմից, արվեստաբանները շահագրգռված չեն իրենց աշխատանքները գրել և հանրայնացնել, քանի որ իրենց տեսանկյունից՝ պահանջարկ չկա: Բացի այդ, նրանք մտահոգված են, որ գործընկերները կարող են քննադատությունն ընկալել որպես անձնական հարձակում կամ ագրեսիա:

Հարցվածներից ոմանք նշեցին, որ այս եռակողմ մոդելը կարող է կիրառելի չլինել հայաստանյան միջավայրի համար, և որ արվեստի ոլորտի խնդիրներից մեկն այն է, որ փորձեր են արվում վերցնել արևմտյան մոդելները և դրանք կիրառել արվեստի տեղական բնագավառում, ինչը հաճախ շատ քիչ առնչություն ունի արվեստի ոլորտի իրական փորձառության հետ:

Ռեսուրսների պակաս և ֆինանսական ապահովվածություն

Հարցվածներից շատերի պնդմամբ՝ Հայաստանում չկա արվեստի շուկա՝ նկատի ունենալով, որ այս ոլորտում չկա հարաբերականորեն կայուն գործող մեխանիզմ: Իհարկե, սա չի նշանակում, որ անհատ արվեստագետները կոմերցիալ գործունեությամբ չեն զբաղվում, այլ որ դրանք բավարար եկամուտ չեն ապահովում և որպես համակարգ չեն գործում: Շուկան տարերային է: Արդեն քննարկել ենք, թե ինչպես պետական քաղաքականությունը չի նպաստում արվեստի շուկայի կայացմանը, այնուհանդերձ, միևնույն ժամանակ մանրամասն հետազոտության կարիք կա՝ հասկանալու համար, թե որ ոլորտներն են քիչ թե շատ ունակ գործել շուկայի կանոններով, և որոնք դեռևս աջակցության կարիք ունեն: Ինչպես ոլորտի որոշ

ներկայացուցիչներ պնդում են՝ տրամաբանական է, որ կոմունիստական ժառանգությունն ու սոցիալ-քաղաքական խնդիրներով համակցված ակնթարթային անցումը շուկայական տնտեսության՝ արվեստի շուկայի սահուն ազատականացում չէր կարող ապահովել: Այսպիսով, կորպորատիվ հովանավորչությունը, բիզնեսների հետ համագործակցությունը հարաբերականորեն նոր երևույթ են արվեստի ոլորտում, և ներդրման ծավալները դեռևս հետազոտության կարիք ունեն:

Համաշխարհային շուկա մուտք գործելու հնարավորությունները սահմանափակ են, քիչ են նաև անկախ հաստատությունները, որոնք կարող են ապահովել այդ հասանելիությունը: Ի վերջո, արվեստի կառավարման և արվեստի շուկայավարման մասնագիտություններ գրեթե գոյություն չունեն ոլորտում:

Պետական ֆինանսավորումն արդեն մանրամասնորեն քննարկվել է *Պետական մշակութային քաղաքականության խնդիրները* բաժնում: Հավելյալ խնդիր է միջոցների պակասը, որը հատկապես տեսանելի է կրթության առաջին տարիներին և կարիերայի սկզբում: Շատ ուսանողներ պարզապես միջոցներ չունեն արվեստի պարագաներ, սարքավորումներ, գործիքներ և այլ պիտույքներ գնելու համար: Հետագայում ավելանում է նաև ազատորեն ստեղծագործելու և իրենց աշխատանքները ցուցադրելու համար անհրաժեշտ տարածքի բացակայության հարցը: Անհրաժեշտ է ստեղծել ֆիզիկական տարածքներ և հարթակներ՝ ուսման, համագործակցության և ստեղծագործելու համար: Ինչպես ամենուր՝ միջոցների և ֆինանսական կայունության պակասն արվեստագետներին դրդում է զբաղվել այլ գործունեությամբ կամ իրենց ստեղծագործ ներուժն օգտագործել առևտրային և ժամանցային գործունեության մեջ:

Այս բաժնում քննարկվելիք ֆինանսավորման վերջին աղբյուրը միջազգայինն է, որի շահառուները հիմնականում արվեստի ոչ ավանդական ձևերով զբաղվող անհատ արվեստագետներն ու կազմակերպություններն են: Քանի որ նրանք մեծ ուշադրության չեն արժանանում պետության կողմից և գործում են անկայուն շուկայում՝ ստիպված են ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրներ հայթայթել արտասահմանում: Սահմանափակ թվով արվեստագետների խմբերն ու հաստատությունները, որոնց իսկապես հաջողվել

է զարգացնել դրամաշնորհի դիմելու և միջազգային ծրագրերին մասնակցելու հմտությունները, կախված են ֆոնդահայթայթման սեփական կարողություններից: Մյուս կողմից, ազգայնական պատումի շրջանակներում գործող արվեստագետները չեն կարողանում օգտվել ֆինանսավորման այս հնարավորություններից, քանի որ դոնորների հետ միևնույն «լեզվով» չեն խոսում և չեն տիրապետում նույն գործիքներին ու մշակույթին:

Սոցիալական մեդիայի դերը

Ֆեյսբուքը Հայաստանում ամենալայն օգտագործումն ունեցող սոցիալական մեդիա հարթակներից է: Քաղաքական վերջին զարգացումների լույսի ներքո՝ այս հարթակը դարձել է ծայրահեղ թունավոր՝ սոցիալական մեդիա տրոլլինգով և բուլիինգով զբաղվողների պատճառով (և ոչ միայն), որոնք որսում են ոչ ավանդական կարծիքներն ու թիրախավորում տարբերվող հայացքներ ունեցողներին: Ավելի բարդ է դարձել հանրության հետ Ֆեյսբուքի միջոցով երկխոսության մեջ մտնելը:

Ինչպես հարցվածներից ոմանք ձևակերպեցին՝ սոցիալական հարթակների օրակարգը Հայաստանի ամենամեծ գրաքննիչն է: Այս օրակարգերի արդյունքում արվեստի գործերը հաճախ զոհ են դառնում բուլիինգին, քաղաքական (թյուր) մեկնաբանություններին, բևեռացմանը և այլն: Եթե անգամ արվեստագետի աշխատանքը չի վերաբերում ընթացիկ թեժ քննարկումներին, այն պարզապես ուշադրության չի արժանանում կամ արհեստականորեն ներքաշվում է դրանց մեջ: Սա, իհարկե, մասամբ կապված է սոցիալական մեդիայի աշխատանքային մեխանիզմների և ալգորիթմների հետ, սակայն եթե այլ տեղերում արվեստագետը ունի կա՛մ ֆինանսներ, կա՛մ գործիքակազմ դրանք շրջանցելու համար, հայաստանցի արվեստագետի դեպքում այս խնդիրն ավելի վճռորոշ է: Այսինքն, հայ արվեստագետն ինչ-որ առումով ստիպված է գործ ունենալ քաղաքական օրակարգի հետ:

Ֆեյսբուքից օգտվող լրատվամիջոցները երբեմն շատ վնասակար ազդեցություն են ունենում արվեստագետի վրա, քանի որ միտումնավոր կերպով թյուր մեկնաբանություն են տալիս արվեստի գործերին՝ ընթերցողին հրահրելու/գրավելու համար, և այդպես վարվելով՝ նվազեցնում են արվեստի գործի դերն ու արվեստագետներին դարձնում խոցելի:

Հոգեբանական գործոններն ու ինքնագրաքննությունը

Արվեստագետները հաճախ հիասթափություն են ապրում կողմնակալ ինստիտուտների և սակավ հնարավորությունների պատճառով (հատկապես մարզերում): Նրանք հաճախ հակված են կամ թողնել ստեղծագործական կարիերան, կամ տեղափոխվել արտասահման (կամ մայրաքաղաք): Արվեստագետը մշտապես վախենում է թյուրըմբռնված լինելուց և լուսանցքայնացվելուց, քանի որ հեգեմոն պատումները խիստ հիերարխիկ են և բացառում են տարբերվող կարծիքներ արտահայտողներին: Սա կարող է ոչ միայն հոգեբանական հետևանքներ ունենալ, այլև ուղղակիորեն ազդել արվեստագետի կյանքի վրա: Հարցվածներից շատերը նշեցին, որ իրենք չեն կարող ազատ ստեղծագործել՝ իրենց համայնքում, ընտանիքում և աշխատավայրում մեկուսացման վախի պատճառով: Հարցվածներից մեկը նշեց, որ իր գործատուն (մշակույթի հետ կապ չունեցող ոլորտում) իրեն դիմել է, որ որոշ բովանդակություն այլևս չդնի իր սոցիալական հարթակներում: Շրջապատի այս արձագանքը հանգեցնում է նրան, որ արվեստագետը, մտահոգվելով հնարավոր հետևանքների մասին, սահմանափակում է իր ինքնարտահայտման ձևը և բովանդակությունը: Սա հիմնականում պայմանավորված է համայնքային սերտ հարաբերություններով, որտեղ ցանկացած համարձակություն կարող է անդրադառնալ ոչ միայն արվեստագետի, այլև նրա ընտանիքի անդամների ու ընկերների վրա: Այս ճնշումները պարտադիր չէ, որ ենթադրեն ծանր ֆիզիկական հետևանքներ, այլ ավելի շուտ՝ մեկուսացում և երբեմն բուլիինգ համայնքի այլ անդամների կողմից: Այնուամենայնիվ, շատ արվեստագետներ ինքնագրաքննության կանխիչ միջոցներ են կիրառում՝ ենթադրելով հնարավոր արձագանքները:

Ստեղծագործական ազատության ավելի գործնական խոչընդոտներից բացի՝ կան նաև որոշ հոգեբանական խնդիրներ, որոնք հանգեցնում են լճացման: Շատ արվեստագետներ նշում են, որ ստեղծագործելու մոտիվացիա չեն գտնում, հատկապես 2020-ի պատերազմից հետո, որն ազդել է ընդհանուր հասարակական տրամադրությունների վրա: Այնուամենայնիվ, նույնիսկ պատերազմից առաջ ստեղծագործելը դիտվում էր որպես անիմաստ փորձառություն, քանի որ, առաջին հերթին, այն սխալ էր ընկալվում հանրության կողմից (եթե հասարակությունն ընդհանրապես ներգրավվում էր), և երկրորդ՝ չէր ունենում նշանակալի ազդեցություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության հիմնական արդյունքներն ամփոփելով՝ կարող ենք պնդել, որ Հայաստանում չկա ուղղակի պետական գրաքննություն, այնուամենայնիվ, կա ճնշող հանրային գրաքննություն, հատկապես սոցիալական մեդիայի կիրառման աճի պայմաններում: Արվեստագետները ստիպված են ինքնագրաքննությամբ զբաղվել՝ քաղաքական գործիքավորումից և սոցիալական ճնշումների/մեկուսացման թիրախ դառնալուց խուսափելու համար: Քաղաքական բևեռացումը և 2020-ի պատերազմն ստեղծագործ համայնքի համար ավելի ռիսկային են դարձրել հրապարակային ինքնարտահայտումները: Ի հավելումն այս սահմանափակումների, արվեստի ներկայացուցիչների մի նշանակալի խումբ շարունակում է մնալ սոցիալապես և տնտեսապես խոցելի՝ օրենսդրությունում առկա բացերի պատճառով: Նրանք թերի պետական քաղաքականության պատճառով զրկվում են նաև բազմաթիվ հնարավորություններից:

Այս հետազոտությունը բավականին հավակնոտ և ընդարձակ օրակարգ է ընտրել՝ հաշվի առնելով, որ նախկին ուսումնասիրությունները ավելի որոշակի և նեղ մասնագիտական հարցեր բարձրացնելու հիմք չեն տրամադրում: Ստանձնելով այս հետազոտական «ռիսկը»՝ հնարավոր եղավ հետագա հետազոտության համար հանդես գալ որոշ առաջարկություններով. դրանք ներկայացվում են ստորև.

- Անհրաժեշտ են քանակական հետազոտական նախագծեր, որոնք կօգտագործեն վիճակագրական տվյալներ՝ հասկանալու համար արվեստի ոլորտի թվային ցուցիչները՝ ֆինանսավորման աղբյուրներն ու դրանց համամասնությունը, յուրաքանչյուր բնագավառում ներգրավվածների մոտավոր քանակը և ըստ ծավալի՝ ֆինանսական կարիքները:

- Հետազոտական աշխատանքները, որոնք քարտեզագրում են արվեստի յուրաքանչյուր բնագավառ, ներկայացնում են դրանց ցուցանիշները, ծավալը և շուկայի հեռանկարները, թույլ կտան ավելի նպատակային ֆինանսավորման քաղաքականություն առաջարկել (պետությանը, միջազգային և կորպորատիվ դերակատարներին): Նույն հետազոտությունը պետք է կիրառվի նաև պետական ոչ առևտրային կազմակերպությունների նկատմամբ՝ գնահատելու դրանց արդյունավետությունն ու ինքնուրույն գործելու կարողությունը:
- Օրենսդրական մեխանիզմները պետք է ուսումնասիրվեն համապատասխան մասնագետների կողմից և գնահատվեն՝ հասկանալու համար, թե որքանով են դրանք կիրառելի հայաստանյան արվեստի ոլորտում, և ի՞նչ հնարավոր քայլեր են ձեռնարկվում ոլորտն ավելի դինամիկ դարձնելու և մասնակցությունը խրախուսելու համար:
- Պետք է ավելի շատ ուսումնասիրել մարզերում ստեղծագործ ոլորտի իրավիճակը: Սա արվեստի բնագավառի սոցիալապես և տնտեսապես ամենախոցելի խումբն է, և հրատապ է հասկանալ, թե որոնք են տեղական կարիքներն ու հնարավորությունները:
- Օգտակար կլինի նաև հետազոտել պետական մշակութային ենթակառուցվածքը, ներառյալ՝ նախարարության ներսում կատարվող զարգացումները, որոշումների կայացման մեխանիզմները, ինչպես նաև դրանց կապը մարզային և տեղական իշխանությունների հետ: Սա թույլ կտա հասկանալ, թե ինչպես այդ կառույցները կարող են ավելի արդյունավետ դառնալ արվեստի կառավարման հարցում:
- Սոցիալական մեդիայի դերն արվեստի ոլորտի համար վճռորոշ է, բայց դեռևս չկա խոսույթ այն մասին, թե այն ինչ հնարավորություններ և սահմանափակումներ է ենթադրում հայաստանյան արվեստի ոլորտի ներկայացուցիչների համար:
- Վերջապես, հրատապ անհրաժեշտություն կա ներգրավելու հումանիտար և հասարակական գիտությունների մասնագետներին տեղական մշակույթի և ինքնության հետազոտության մեջ: Սա վճռորոշ է, քանի որ ոլորտը մեծ կորուստներ է կրում ինքնահայեցման և տեղական փորձը հասկանալու

անկարողությունից: Եթե տեղական պրակտիկաները և այն մոդելները (սովորաբար Արևմուտքում առաջացած), որոնք փորձում ենք կիրառել ոլորտը գնահատելու համար, չեն համապատասխանում, ապա խնդիրների անվերջանալի շրջանը դժվար կլինի հաղթահարել:

Որպես եզրափակիչ խոսք, պետք է ևս մեկ անգամ խոստովանենք, որ հայաստանյան արվեստի ոլորտը բավականին դինամիկ է, և կան բազմաթիվ նվիրյալ անհատներ և կազմակերպություններ, որոնք շարունակում են իրենց աշխատանքը՝ չնայած դժվարություններին: Այսպիսով, մենք պետք է դիտարկենք վերոնշյալ բացերը որպես օգտակար ուղեցույցներ՝ նոր հեռանկարներ բացելու, և ավելի շատ մարդկանց ներգրավենք արվեստի ոլորտն առաջ մղելու գործում:

ՀՂՈՒՄՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Կառավարություն: (2021 թ., օգոստոս):
ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագիր:
https://www.gov.am/files/docs/4586.pdf

Ստեղծագործ Եվրոպա Հայաստան:
COVID-19 համաճարակի ազդեցությունը մշակույթի և ստեղծարար ոլորտների անկախ գործիչների վրա Հայաստանում: Ճգնաժամի կառավարման առաջարկներ:
https://www.creativeeurope.am/survey-results

Դանիելյան, Գ. (2020 թ., մարտի 14):
Արվեստը պետք է լինի ինքնուրույն, ազատվի կապանքներից, շեշտում է Ռուբեն Բաբայանը:
https://www.azatutyun.am/a/30487550.html

Epress.am (2021 թ., հոկտեմբերի 13):
Հոգևորականին դուր չեկավ SEX-ը. Կապանում գրաքննեցին ցուցահանդեսը:
https://epress.am/2021/10/13/deputy_mayor_vs_art.html

Գրիգորյան, Ա., Խալաթյան, Ա., Մնացականյան, Գ., Օհանյան, Մ., Պապոյան, Ս., Մլքե-Գալստյան, Շ. (2017):
Նոր մշակութային քաղաքականություն Հայաստանի մարզերի համար: Մշակույթի և ստեղծարարության ոլորտի քաղաքականության ամփոփագիր: ԵՄ-Եվրասիա համագործակցություն հիմնադրամ:

Հարությունյան, Է. (2021 թ., սեպտեմբերի 29):
Չկա քննադատություն: Երևան ամսագիր:
https://evnmag.com/articles/drvagner-inqnoutyan-taraz-mi-coucahandesi-qnnadatoutyoun.html

Օհանյան, Ա. (2018 թ., հունիսի 29):
Նոր Հայաստանում՝ գրքի և գրականության հին հարցերի շուրջ:
https://hetq.am/hy/article/90807

Redmond, A. (2020, February 20). EXCLUSIVE:
'Culture of censorship' as arts workers fear backlash. Retrieved from Art Professional:
https://www.artsprofessional.co.uk/news/exclusive-culture-censorship-arts-workers-fear-backlash

Հայաստանի Հանրապետության Կրթության, Գիտության, Մշակույթի և Սպորտի նախարարություն:
Կառուցվածք:
https://escs.am/en/static/structura

UNESCO. (2018). *2005 Convention Global Report. Reshaping Cultural Policies. Advancing Creativity for Development. Retrieved from*
https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000260592

Եղիազարյան, Ա. (2021 թ., փետրվարի 17):
#kondgallery. պարտիզանական պայքար ժամի քուչում: Երևան ամսագիր:
https://evnmag.com/articles/kondgallery-partizanakan-payqar-jami-qouchoum.html

ԱՂՅՈՒՍԱԿ 1. ԽՈՐՔԱՅԻՆ ՁՐՈՒՅՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

#	Անուն	Մասնագիտություն
1	**Մարինե Կարոյան**	ԱՐԷ կատարողական արվեստների փառատոնի հիմնադիր, ՀայԱրտ մշակութային կենտրոնի ղեկավար
2	**Արիկ Բամբիռ**	Երաժիշտ, Բամբիռ ռոք խմբի անդամ, Թմբաթա խմբի հիմնադիր
3	**Վահե Բուդումյան**	Ֆոկուս արվեստի ՀԿ-ի ղեկավար, Մշակույթի նախկին փոխնախարար
4	**Արտակ Գևորգյան**	Արվեստագետ (երաժշտություն, սթրիթ արթ), «Հակահարված» արտ խմբի համահիմնադիր
5	**Շուշաննա Սիրականյան**	Անկախ արվեստագետների հետ աշխատող փաստաբան
6	**Վարդան Ազատյան**	Արվեստի պատմաբան, տեսաբան և թարգմանիչ, Արվեստի քննադատների ազգային ասոցիացիայի հիմնադիր անդամ
7	**Լիանա Ստեփանյան**	Արվեստաբան, Գյումրի
8	**Վահան Խաչատրյան**	Ռեժիսոր

9	**Անանուն արվեստագետ**	Կինոռեժիսոր, Վանաձոր
10	**Սոնա Հարությունյան**	«Մշակույթների երկխոսություն» հիմնադրամի հիմնադիր նախագահ
11	**Գևորգ Տեր-Գաբրիելյան**	Արձակագիր
12	**Արևիկ Աշխարոյան**	«ԱՐԻ գրական գործակալության» հիմնադիր
13	**Սիլվա Չոբանյան**	Նորարար Փորձառական Արվեստի Կենտրոն (ՆՓԱԿ), Գործադիր տնօրեն
14	**Արթուր Ավանեսով**	Կոմպոզիտոր
15	**Արմեն Օհանյան**	Արձակագիր
16	**Տիգրան Պասկևիչյան**	Գրող, լրագրող, վավերագրող և սցենարիստ
17	**Ցոլակ Մլքե-Գալստյան**	«Միհր» ժամանակակից պարի թատրոնի գեղարվեստական ղեկա-վար
18	**Հովհաննես Մարգարյան և «Արտլաբ Երևան»-ի 2 անդամներ**	ԱՐՏԼԱԲ ԵՐԵՎԱՆ մշակութային ՀԿ

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Ազնիվ Թադևոսյանը Տարտուի համալսարանի Յոհան Շուտտե քաղաքական հետազոտությունների ինստիտուտի կրտսեր գիտաշխատող և քաղաքական գիտությունների դոկտորանտ է: 2021 թվականին նա ավարտել է իր մագիստրոսական ուսումը նույն համալսարանի միջազգային հարաբերությունների և տարածաշրջանային հետազոտությունների ծրագրում: Նա Հայաստանում տեղական և միջազգային ՀԿ-ներում աշխատելու փորձ ունի և տարբեր փուլերում զբաղվել է հետազոտություններով, տարածաշրջանային երկխոսության, տեղական կարողությունների զարգացման և խորհրդարանական աջակցության ծրագրերով: Բացի իր հիմնական աշխատանքային ոլորտից, նա ներգրավված է եղել տարբեր կարճաժամկետ հետազոտական նախագծերում և «Արի Գյումրի» իր նախաձեռնությամբ, որի շրջանակներում վերջին 7 տարիների ընթացքում Գյումրիում նախագծել և իրականացրել է մշակութային և քաղաքական շրջայցեր: Հետաքրքրված է տեսողական և կոնցեպտուալ արվեստով և պատմապատումով: Ներկայումս Ազնիվը շարունակում է իր 2021 թվականին սկսած հետազոտությունը, որն ուսումնասիրում է քաղաքականության և արվեստի միջև կապը՝ 2012 թվականից հետո ռուսաստանյան այլախոհական երաժշտության և կինոյի օրինակի վրա:

Publisher
Friedrich Naumann Foundation for Freedom Armenia
Kh. Abovyan Street 41, office 11, 0009 Yerevan, Armenia

Website: https://www.freiheit.org/south-caucasus
Facebook: https://www.facebook.com/FNFARMENIA

Author
Azniv Tadevosyan

English-Armenian Translator
Siranush Yesayan

Editor of the Armenian Publication
Seda Mesropyan

Armenian layout
Arusyak Ohanyan

Typeface
HayRoboto

Year of publication
2022

Artistic Freedom in Armenia. Art interrupted report
This research aims to study one of the issues of the Armenian art scene - the condition of artistic freedom. The research tries to show how the representatives of art scene perceive their freedom of expression. The study reveals the fields and gaps which will need an additional inquiry. One of the goals of the research to trigger a deeper analysis of the revealed gaps in the future.

Note about the publication
The publication of this report is made possible by the support of Friedrich Naumann Foundation for Freedom South Caucasus. The views and opinions expressed in this publication do not necessary reflect the position of the Friedrich Naumann Foundation for Freedom and its employees.

FRIEDRICH NAUMANN FOUNDATION For Freedom.

Հայաստան

Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի
հայաստանյան գրասենյակ
Խ. Աբովյանի փ. 41, գրաս. 11, 0009, Երևան, ՀՀ
Էլ. փոստ՝ armen.grigoryan@freiheit.org; lusine.martirosyan@freiheit.org

ISBN 978-9939-1-1539-9

9 789939 115399

FRIEDRICH NAUMANN FOUNDATION For Freedom.

Հայաստան